

Առանց գրավի ապահովման չվերականգնվող սահմանաչափով վարկային քարտեր
Տեղեկատվական ամփոփագիր

Թարմացվել է 23.04.2019թ.

Վարկային քարտը տրամադրվում է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) կողմից ֆիզիկական անձանց (այսուհետ՝ Հաճախորդ):

Վարկը տրամադրվում է Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակում և մասնաճյուղերում Arca Classic քարտի միջոցով, որը հետագայում այլ նպատակների համար չի կարող օգտագործվել: Քարտերի տրամադրման և օգտագործման կանոնները ներկայացված են [կայքում](#):

Քարտի վարկային սահմանաչափը կարող է օգտագործվել տրամադրման պահից սկսած 1 ամսվա ընթացքում: Մարումը սկսվում է սահմանաչափի օգտագործման վերջնաժամկետի ավարտից հետո՝ հաճախորդի կողմից վերջինիս հետ կնքված պայմանագրում նշված մարման նախընտրելի մոտակա օրվանից:

Քարտի արժույթը	ԱՄՆ դոլար, Եվրո	
Վարկային սահմանաչափը	Նվազագույնը՝ 300,000 ՀՀ դրամին համարժեք ԱՄՆ դոլար/Եվրո	
	Առավելագույնը՝ զուտ աշխատավարձի կամ միջին ամսական եկամուտների (ձեռնարկատիրական գործունեությունից, թոշակներից, վարձակալությունից և այլ փաստաթղթային հիմնավորած եկամուտների) եռապատիկը ՝ կախված Հաճախորդի վարկունակությունից:	
Վարկի ժամկետը	18 ամիս	
Քարտի պատրաստման և տրամադրման ժամկետը	Առավելագույնը 5 աշխատանքային օր	
Տարեկան պարզ տոկոսադրույքը՝ ըստ արժույթի	ԱՄՆ դոլար - 16%, Եվրո - 14%	
Քարտային հաշվի սպասարկման վճար	3,000 ՀՀ դրամ միանվագ	
Կանխիկացման կետերում և բանկոմատներում կանխիկի տրամադրում	Բանկի՝ 3% Այլ բանկերի՝ 4%	
Բանկի «Վճարային Պորտալ» համակարգով քարտից քարտ փոխանցում	ԱրՔա համակարգի անդամ բանկի ArCa, Visa և Mastercard քարտին	3%
	ԱրՔա համակարգի անդամ չհանդիսացող բանկի Visa քարտին	3% + (1%, նվազագույնը՝ 500 ՀՀ դրամ)
Բանկի դրամարկղերում, Ինտերնետ և Մոբայլ Բանկ համակարգերով Բանկի քարտապանների քարտից քարտ փոխանցում	ԱրՔա համակարգի անդամ բանկի ArCa, Visa և Mastercard քարտին	3%
	ԱրՔա համակարգի անդամ չհանդիսացող բանկի Visa քարտին	3% + (1%, նվազագույնը՝ 500 ՀՀ դրամ)
Բանկի բանկոմատներով քարտից քարտ փոխանցում	Բանկի ArCa, Visa և Mastercard քարտերի համար	3%
	ԱրՔա համակարգի անդամ բանկի ArCa, Visa և Mastercard քարտերի համար	0.3%
Քարտից քարտ (այլ եղանակով) կամ քարտային հաշվից այլ հաշիվ փոխանցում	3%	
Գործարքներ առևտրային կետերում	0 ՀՀ դրամ	

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել:
 Հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի <https://www.conversebank.am> ինտերնետային կայք, Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակ/ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ +374 10 511 211

Մարման հաճախականությունը և եղանակը

Մարումը սկսվում է օգտագործման ժամկետի ավարտից մեկ ամիս հետո հետևյալ եղանակով՝ «Անուիտետային» (հավասարաչափ ամսական մարում), որի մեջ փոփոխական մասերով մտնում են մայր գումարը և կուտակված տոկոսները:

Տոկոսագումարների հաշվարկման օրինակ

Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Տոկոսադրույքը կիրառվում է նվազող մնացորդի նկատմամբ:

Հետևյալ պայմաններով վարկի դեպքում՝

Վարկի գումար	1,500 ԱՄՆ դոլար
Անվանական տոկոսադրույք	16%
Մարման ժամկետ	18 ամիս
Մարման տեսակ	անուիտետային

Մարումների հետ կապված գումարները կկազմեն՝

Ամսական մարում (մայր գումար + տոկոսագումար)	94.28
Ընդհանուր տոկոսագումար	197.12
Մարումների հանրագումար	1,697.12

Տույժեր և տուգանքներ

Պայմանագրով նախատեսված մարման ժամկետների խախտում թույլ տալու դեպքում Վարկառուն Բանկին վճարում է տույժ՝ 0.13% ուշացման յուրաքանչյուր օրվա համար:

Ուշադրություն

Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկի մարումների վրա:

Վարկի անվանական տոկոսադրույքը կարող է փոփոխվել Բանկի կողմից:

ՀՀ առևտրային բանկերից ԱրՔա համակարգի անդամ չի հանդիսանում ՎՏԲ-Հայաստան բանկը:

Քարտային հաշվի արժույթից փարբերվող արժույթով գործառնության/գործարքի հավասարագրման պահին գործառնության/գործարքի հավասարագրման և փաստացի հաշվեգրման ժամանակ կիրառվող փոխարժեքները կարող են փարբերվել: Հավասարագրման ժամանակ կիրառվում են ArCa վճարահաշվարկային համակարգերի կողմից սահմանված փոխարժեքները, իսկ գործառնության/գործարքի հաշվեգրման ժամանակ կիրառվում է Բանկի կողմից գործառնության/գործարքի հաշվեգրման օրվանը նախորդող բանկային օրվա ավարտի համար սահմանված ԱՄՆ դոլարի փոխարժեքը: Փոխարժեքների փարբերության հետ կապված արժույթային և այլ ռիսկերի համար Բանկը պարտասխանաբարություն չի կրում:

Հաճախորդի կողմից տոկոսագումարների և վարկի գումարների մարումները ժամանակին չկատարելու դեպքում այդ մասին տեղեկատվությունը կտրամադրվի ՀՀ Կենտրոնական բանկի վարկային ռեգիստր և «ԱԲՈԱ Քրեդիտ Բեփոթինգ» ՓԲԸ-ին: Վարկ վարկային պարտություն ունենալը հետագայում խոչընդոտում է օգտվել Բանկի կողմից տրամադրվող ֆինանսական գործիքներից:

Վարկային պարտավորությունները պայմանագրով սահմանված կարգով չկատարելու դեպքում պարտավորությունները կարող են մարվել Հաճախորդի այլ գույքի հաշվին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Քարտային հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաճախորդի իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կամ օրենքով սահմանված կարգով այլ իրավասու մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա:

Առանց հաճախորդի կարգադրության հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է

իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա: Դրանք արտացոլվում են հաճախորդի բանկային հաշիվների քաղվածքներում, որոնք Բանկի և հաճախորդի միջև համաձայնեցված կարգով տրամադրվում են հաճախորդին:

Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը

1	Վարկային դիմում
2	Անձը հաստատող փաստաթղթի և Հանրային ծառայությունների համարանիշի կամ ՀԾՀ չստանալու վերաբերյալ տեղեկանքի (չի պահանջվում նույնականացման քարտի առկայության դեպքում) բնօրինակները
3	Գործատուի ձևաթղթի վրա՝ տեղեկանք աշխատանքի վայրից, որտեղ պետք է նշված լինի զբաղեցրած պաշտոնը, աշխատանքի ստաժը և զուտ աշխատավարձի չափը (չի վերաբերվում դրամական միջոցներով ապահովված հաշվարկային քարտերին): Տեղեկանքի տրամադրման ժամկետը չպետք է գերազանցի 20 օրացուցային օրը (աշխատանքի վայրից տեղեկանքը չի պահանջվում, եթե հաճախորդը դիմելու պահի դրությամբ առնվազն նախորդ 6 ամսվա ընթացքում աշխատավարձը ստացել է Բանկի միջոցով: Որոշ դեպքերում կարող է ընդունվել 6 ամսից կարճ ժամկետ)
4	Անհատ ձեռնարկատիրոջ դեպքում.
4.1	Բիզնեսի վերլուծություն (կատարվում է Բանկի կողմից)
4.2	Այլ եկամուտները հիմնավորող փաստաթղթեր (առկայության դեպքում)
	Անհրաժեշտության դեպքում կարող են պահանջվել նաև այլ փաստաթղթեր

Վարկը տրամադրելու դրական որոշման և մերժման գործոնները

Բանկը հակված է տրամադրել վարկը, եթե՝

- Հայտատուն չունի ժամկետանց և/կամ դասակարգված պարտավորություններ:
- Հայտատուն գնահատման արդյունքում ճանաչվում է վարկունակ,
- Հայտատուի ներկայացրած փաստաթղթերը և տեղեկանքները արժանահավատ են և ներառում են բոլոր անհրաժեշտ տեղեկությունները՝ հայտատուի վարկունակությունը ստուգելու համար:

Հայտատուի՝ վերոնշյալ պայմաններից ցանկացածին, ինչպես նաև Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ պահանջներին չհամապատասխանելը կարող է հանգեցնել վարկի տրամադրման մերժմանը:

Վարկի տրամադրման որոշման կայացումը տևում է առավելագույնը 5 բանկային օր, Հաճախորդը տեղեկացվում է մեկօրյա ժամկետում, Վարկը տրամադրվում է 5 բանկային օրվա ընթացքում:

Ծանուցում Ֆինանսական համակարգի հաշտարարի վերաբերյալ

Տեղեկացնում ենք, որ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից Ձեզ մատուցվող ծառայությունների հետ կապված տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

Բանկի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված համաձայնագրի համաձայն՝ Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

**Հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. Խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ
 Էլ. փոստ՝ info@fsm.am
 Հեռախոս՝ (+37460) 70-11-11
 Ֆաքս՝ (+37410) 58-24-21**

Կապ Բանկի հետ

Հավելյալ տեղեկատվության համար կարող եք՝

- այցելել Բանկի <https://www.conversebank.am> ինտերնետային կայք
- այցելել Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ
- զանգահարել (+374 10) 511 211 հեռախոսահամարով
- Viber ` +374 95 511 211
- Skype ` conversebank-callcenter